

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐԲԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

N 17-69
23.10.2017

ՀՀ արդարադատության նախարար
Պարոն Դավիթ Հարությունյանին

ԸՆԹԱՑԻՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


Հարգելի պարոն Հարությունյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները 13.10.2017թ. այցելել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ: Այցելության ժամանակ ցանկացել են հանդիպել կալանավորված անձ [redacted] ի [redacted] սակայն հիմնարկի ղեկավարությունը չի թույլատրել հանդիպել նշված անձի հետ՝ պատճառաբանելով, որ քննիչի կողմից առկա է տեսակցությունների արգելք: Այնուհետև դիտորդների խմբի անդամները ցանկություն են հայտնել դիտարկել [redacted] խցի պայմանները: Դիտարկումը կատարվել է կալանավորված անձանց բացակայությամբ: Դիտարկման ժամանակ և ՔԿՀ-ի վարչակազմից ստացված տվյալներից պարզվել է, որ նշված խուցը նախատեսված է 8 անձի բնակության համար, սակայն խցում բնակվում են 13 կալանավորված անձինք, հետևապես պահպանված չէ օրենսդրությամբ յուրաքանչյուր անձի համար նախատեսված 4մ² բնակելի տարածությունը: Ցանկանում ենք նշել նաև, որ 2017թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում սա արդեն 2-րդ դեպքն է, երբ խմբի անդամների աշխատանքը խոչընդոտվում է և նրանց չեն թույլատրում հանդիպել [redacted] (առաջին խոչընդոտման վերաբերյալ խումբը ներկայացրել էր թիվ N 17-67 ընթացիկ հաշվետվությունը):

Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք քննարկել տվյալ խցի գերբնակեցումը վերացնելու հարցը և քայլեր ձեռնարկել, որպեսզի հետագայում չխոչընդոտվի դիտորդների խմբի անդամների աշխատանքները:

Հարգանքով՝

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում
և մարմիններում հասարակական վերահսկողություն
իրականացնող հասարակական դիտորդական խմբի նախագահ


Արայիկ Զախյան